



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

Քաղ. Երևան

9 փետրվարի 2017թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի թիվ 2
դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ֆ. Թոխյանի

Անդամակցությամբ՝ Ա. Խաչատրյանի

Հ. Նազարյանի

Քննության առնելով Միշա Պետրոսյանի անհատական դիմումի ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց .

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ Միշա Պետրոսյանը 2017թ. հունվարի 23-ին դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով որոշել «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասի, 249-րդ հոդվածի համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 6-րդ, 22-րդ, 91-րդ հոդվածների պահանջներին, ինչպես նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով սահմանված իրավակարգավորման համապատասխանությունը ՀՀ Սահմանադրության 3-րդ, 18-րդ, 19-րդ, 91-րդ հոդվածների պահանջներին:

Սույն անհատական դիմումի նախնական ուսումնասիրությունը ցույց տվեց.

1. Դիմողը գտնում է, որ ՀՀ վերաքննիչ վարչական դատարանը, չկիրառելով միջազգային պայմանագրերի նորմերը, խախտել է ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածը, որի արդյունքում իր նկատմամբ կայացված դատական ակտով ստեղծել է անհաղթահարելի իրավիճակ:

Ըստ դիմողի՝ ՀՀ վճռաբեկ դատարանը, կայացնելով վճռաբեկ բողոքն առանց քննության թողնելու մասին որոշում, զրկել է իրեն սահմանադրական իրավունքներից, մասնավորապես, արդարադատության իրավունքից:

2. Դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունը «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասի և 249-րդ հոդվածի մասով վկայում է, որ դիմողի նկատմամբ առաջացած անբարենպաստ հետևանքներն իր նկատմամբ կայացված համապատասխան դատական ակտերի արդյունք են, հետևաբար, խնդրո առարկա դրույթների սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողն ընդամենը բարձրացնում է դրանց կիրառման իրավաչափության հարց: Մասնավորապես, դիմողի փաստարկներն առ այն, որ «...վարչական վերաքննիչ դատարանը, որոշման հիմքում դնելով «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասով նախատեսված դրույթները, թույլ է տվել նշված հոդվածի ոչ ճիշտ կիրառում...», կամ «սա ևս ապացուցում է Սահմանադրության և օրենքների կրկնակի խախտումները վարչական վերաքննիչ դատարանի կողմից...» վկայում են, որ դիմողը վերոհիշյալ դրույթների սահմանադրականության հարցի վիճարկման պահանջի քողի ներքո իրականում բարձրացնում է դրանց կիրառման իրավաչափության հարց, ինչն էլ դիմումի քննության ընդունումը մերժելու՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հիմք է: ՀՀ սահմանադրական դատարանի 17.03.2009թ. ՄԴԱՈ-21 որոշմամբ սահմանված իրավական դիրքորոշման համաձայն՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարց, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես Սահմանադրական դատարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ:

3. Ինչ վերաբերում է ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետին, ապա դիմումի և դրան կից ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրությունը ցույց տվեց, որ առկա չեն դիմումի՝ նշյալ դրույթի մասով քննության ընդունումը մերժելու հիմքեր, քանի որ՝

- դիմումում առաջադրված հարցերը ենթակա են սահմանադրական դատարանին,
- դիմողն իրավասու է դիմելու սահմանադրական դատարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ սահմանադրական դատարանի որոշում,
- դիմումի առարկայի վերաբերյալ այլ դիմումի հիման վրա սահմանադրական դատարանում գործի դատաքննություն չի իրականացվում,
- դիմողները սպառել են դատական պաշտպանության բոլոր միջոցները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածով և 32-րդ հոդվածի 1-ին կետով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

1. Միշա Պետրոսյանի անհատական դիմումի հիման վրա գործի քննության ընդունումը՝ «Մաքսային կարգավորման մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 3-րդ մասի և 249-րդ հոդվածի մասով մերժել:

2. «Միշա Պետրոսյանի դիմումի հիման վրա՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 160-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

3. Սույն գործով դատավարությանը որպես պատասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող^ա

Անդամներ^ա

9 փետրվարի 2017 թվականի

ՍԴԴԿՈ/2-2